Ռ. Տ. ՏԻՏԱՆՅԱՆ

ՆՈՐԱԼԱՅՏ ՆՅՈՒԹԵՐ 1793—1795 ԹԹ. ՇՈՒՇԻԲԵՐԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հին ձեռագրերի ինստիտուտ Մաշտոցի անվան Մատենադարանում է պահվում «Պատմութիւն գաւառին Արցախու» ձեռագիր աշխատությունը «գրեալ ի Յակոբ սարկաւագէ Պօղոսեան Զաքարեանց Շուշեցւոյ միաբան սուրբ Երուսաղէմի յամի 1853 ի սուրբ Երուսաղէմ»[1]։ Այս հեղինակի մասին ավելին իմանալու նպատակով մեր պրպտումների ընթացքում Մկրտիչ Աղավնունու «Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի» աշխատության մեջ հանդիպեցինք հետևյալ երկտողին. «Յակոբ սարկաւագ Պօղոսեանց Զաքարեանց Շուշեցի, միաբան 1860-ին սուրբ Յակոբի վանքին կընդօրինակէ, անտառ այլաբանութեան գիրքը»[2]։

Հեղինակի մասին տեղեկություն կա նաև նրա «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատության 14-րդ էջում գտնվող հիշատակագրության մեջ, ուր ասված է. «Այս անձը ազնիվ և միանգամայն իբր հրեշտակ է և վարժապետ կացուցած պատրիարքէն քաղաքի (իմա Երուսաղեմ—Ռ. Տ.) հայ ժողովրդոց դպրատան, ուր քսանիւ չափ աշակերտք կան հասարակ կարդացողք և տասիւ չափ օրիորդք որոց ձեռքը համանգամայն գիրք չկայ և վարժապետք ամսական համարյա թե չունին և տղոց ծնողքը խեղճ ու վրանին գլուխնին չկայ բացի գրեանց, մինչև անգամ հարկաւորը դուռ չունին և այլն»[3]։

Նույն ձեռագրում արված մի այլ ծանոթագրությունից հայտնի է դառնում, որ Հակոբ Շուշեցին 1862 թվականին Երուսաղեմում ձեռնադրվել է վարդապետ՝ Ղևոնդ անունով։ Այլ տեղեկություններ նրա մասին չունենք։

Հակոբ Շուշեցին հավաստում է, որ ինքն ականջալուր հեղինակ է և իր պատմության մեջ նկարագրված իրադարձությունների մասին լսել է իր նախնիներից։ Նա խոստովանում է, որ իր լսած բազմաթիվ անցքերից շարադրում է այն միայն, ինչ հիշում է, ինչպես և ներողություն է խնդրում՝ անունների հնարավոր անճշտությունների համար[4]։

«Պատմութեան» կրկնօրինակի առաջին իսկ էջում նա նշում է, որ ինքն ինչ-որ չափով ականատես է եղել իր նկարագրած քաղաքական անցքերին։ Այսպես, նա գրում է. «Սույն գունակ և իմի հնախօս բերանոց հարց և ծերունեաց լուեալ ե յոյժ սակաւուցն ի յետին ժամանակի ականատես լեալ յանդրգնեցայ ի գլուխ պատմուրեանս ե կալեալ սկսեալ ի շինուրենէ անտի բերդաքաղաքիս Շուշւոյ, *որ ինչ անցք անցին ընդ ազգին մեր ի գաւառին Ղարաբա-*

---

1 *Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 2734, էջ 1։*

2 *Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի, 1929, Երուսաղէմ, էջ 326։*

3 *Մատենադարան, ձեռ. 2734, էջ 14։*

4 *Նույն տեղում, էջ 23։*

ղու՝ որ և Արցախու յաղետալեացն և ի բարեաց անյապաղաբար վիպել ձեռն արկի ըստ իմում նիազ ունակութեանս և տկարագոյն մտացս»[5]։

Հակոբ Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու» ձեռագիր աշխատությունը առ այսօր հայտնի է եղել միայն Ա. Ի. Տեր-Գրիգորյանին։ Վերջինս 1940-ական թվականներին թարգմանել է այն ռուսերեն և տրամադրել Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտին, որտեղ և պահվում է 924 թվահամարի տակ, ձեռագիր վիճակում։

Ն. Լևիատովը իր «Ուրվագծեր Ադրբեջանի 18-րդ դարի պատմութեան» աշխատությունը շարադրելիս օգտվել է Հակոբ Շուշեցու աշխատության ռուսերեն թարգմանությունից և այն բնութագրել իբրև սկզբնաղբյուր։ Հեղինակի մասին Լևիատովը գրում է. «Այս՝ դեպքերի ականատեսի հասարակ և պարզունակ պատմություն է։ Տեղ-տեղ պատմությունը նույնիսկ պրիմիտիվ է, կան և չափազանցություններ, սակայն հեղինակը կարողանում է դիտել և նշում է իրադարձությունների կարևոր և վճռական կողմերը»[6]։

Արդ, քանի որ հայ բանասիրության մեջ Հակոբ Շուշեցու աշխատությունն աննկատ է մնացել, ուստի հարկ ենք համարում ծանրանալ նրա վրա։

Հակոբ Շուշեցին իր «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատության մեջ նկարագրում է 18-րդ դարի կեսերից մինչև 19-րդ դարի սկզբները Ղարաբաղում տեղի ունեցած քաղաքական կարևոր իրադարձությունները։ Նա իր «Պատմութիւն»-ը սկսում է Ադրբեջանի խանությունների և Ղարաբաղի մելիքների դեմ՝ Փանահ խանի վարած պայքարով։ Նկարագրում է և Շուշիբերդի հիմնադրությունն ու Ղարաբաղի ժողովրդի ստրկական աշխատանքն այդ կառույցի վրա։

Առանձնապես մեծ արժեք են ներկայացնում պատմության այն հատվածները, որտեղ նկարագրված են Մուհամմատ Հասան խանի (Ղաջար), Ուրմիայի Ֆաթալի խանի, Քերիմ խան Զենդի Ղարաբաղ կատարած արշավանքներն ու սրանց դեմ Ղարաբաղի հայ և ադրբեջանցի ժողովուրդների հերոսական պայքարը, որ մղում էին նրանք իրենց հայրենի երկրի ազատության համար։

Այսուհանդերձ Հակոբ Շուշեցու «Պատմութիւն» աշխատության առանցքն են հանդիսանում Աղա-Մուհամմատ խանի 1795—1797 թթ. արշավանքները և սրանց նախորդող, 1793—1795 թթ. հետախուզական զորամասերի հարձակումները Շուշիբերդի վրա։

Հակոբ Շուշեցին ականատեսի լավատեղյակությամբ է ներկայացնում Ղարաբաղի ժողովուրդների՝ հայերի ու ադրբեջանցիների օտար նվաճողի դեմ մղած պաշտպանողական, տեղ-տեղ հարձակողական ու պարտիզանական կռիվները։ Պատկերավոր ու նույնիսկ վիպական ձևով է ներկայացվում Շուշիում պաշարված կանանց անօրինակ պայքարը պարսից հրոսակախմբերի դեմ։

Հանձին ներկայացվող ձեռագիր աշխատության, մենք ունենք ևս մի ուշագրավ սկզբնաղբյուր՝ հատկապես Ղարաբաղի պատմության կարևոր դրվագներից մեկի՝ Աղա-Մուհամմատ խանի արշավանքի և ռուսների դեպի Անդրկովկաս շարժվելու ժամանակաշրջանի մասին, որն այս առումով մեզ հայտնի հայկական սկզբնաղբյուրներից ամենածավալունն է։

---

5 Նույն տեղում։

6 В. Н. Левиатов, Очерки из истории Азербайджана в XVIII веке, Баку, 1948, стр. 169.

* * *

Հայտնի է, որ Նադիր Շահի մահից հետո, կարճ ժամանակամիջոցում Ադրբեջանում ձևավորվում են մի շարք խանություններ։ Հաջի Զելերին կրկին դառնում է Շեքիի խան։ Ժամանակակիցների վկայությամբ, նա այնքան է հզորանում, որ կարողանում է ոչ միայն գրավել Ղարաբաղի խանության մի մասը, այլև իր իշխանության ազդեցությունը տարածում է մինչև Թավրիզ քաղաքը։ Այդ նույն ժամանակաշրջանում Ջհարի մարզից հանդես է գալիս Փանահ խանը իր կողմնակիցներով, կռվի բռնվում Զելեբիի զորամասերի հետ։ Չնայած վերջինիս հաջողվում է ցրել Փանահ խանի ջոկատները, սակայն երբ Պարսկաստանից վերադառնում են Փանահ խանի ցեղակիցները, նրան հաջողվում է Ղարաբաղից հեռացնել հակառակորդի զորամասերը, իսկ Բայաթ կոչվող բերդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախվում է Հաջի Զելեբիի բանակը։

Այնուհետև Փանահ խանը իր իշխանությունը հաստատում է Ղարաբաղի վրա և մտահոգվում նրա ապահովությամբ։ Նա միաժամանակ օգտվելով Պարսկաստանում տեղի ունեցող ներքին խռովություններից, իր ազդեցությունը տարածում է մինչև Արդաբիլ ու այնքան է հզորանում, որ նույնիսկ ազդում է Գանձակի խանության ներքին գործերի վրա։ Փանահ խանի աջակցությամբ Գանձակի խանության աթոռը գրավում է նրա համախոհներից Զիադ-օղլին։ Սակայն, այդ օրերին փոխվում է դրությունը հարավային Ադրբեջանում, Ամիր Ասլան խանի փոխարեն հանդես է գալիս Մուհամմատ Հասան խան Ղաջարը (Աղա-Մուհամմատ խանի հայրը—Ռ. Տ.), որը հզորանալով մեծ վտանգ է դառնում նաև հյուսիսային Ադրբեջանի համար։

Ելնելով այս լուրջ վտանգի առկայությունից, Փանահ խանը իր առաջնահերթ խնդիրն է դարձնում Ղարաբաղի խանության հարավային սահմանների ամրապնդումը։ Այս առիթով հրավիրված խորհրդակցության մասին հիշատակություններ են թողել Ադրբեջանի պատմագիրներից Ջամալ Ջվանշիր Ղաբաբաղին[7], Միրզա-Ադի-Գյոդալ բեկը[8] և ուրիշներ։

Խորհրդակցության մասնակիցները, վերահաս վտանգից փրկվելու համար անհրաժեշտ են գտնում ստեղծել մի հաստատուն հենարան։ Այդ վտանգը նրանք սպասում են ոչ միայն ներքին, այլև արտաքին թշնամու կողմից։ Ահա այս հարցին յուրովի անդրադարձել է նաև Հակոբ Շուշեցին. «...և յետ ժամանակաց,—գրում է նա,—ինչ կոչեաց խանն զմեծամեծս և զիշխանս երկուց ազգաց (հայ և ադրբեջանցի—Ռ. Տ.) ասէ ցնոսա կամիմ զի բերդ մի տալ շինել բա(յ)ց չգիտեմ տեղի մի ամուր և յարմար. յառաջեաց Շահնազարն և ասէ ցուցից մեծութեանդ լեառն մի որ ստորադիր է գեղջէն Շուշոյ, բաց (ի) ի տեղոյն ոչ գտանէք յայլ ուրէք հարմարագոյն քան զայն՝ և ըստ կամաց ձերոց յարմար շինութեան բերդաքաղաքի»։ «...Եւ յորժամ տեսին և հավանեցան հրաման եհան խան(ն) ընդ ամենայն գաւառն՝ յիւրաքանչիւր տանէ այր մի ժողովել, զի եկեսցեն հացիւն իւրեանց ի շինութիւն բերդին։ Ըստ հրամանի խանին իւրաքանչիւր գիւղականք ընդ ինքեանս ունելով զիշխանս իւրեանց։ Ժողովեցին ևս զամենայն հիմնադիր ճարտարապետս ի լեառն այն։

---

7 Джамаль-Джваншир Карабаги, Карабаги («Кавказ», 1855).
8 Мирза Адигезаль-Бек, Карабах-наме, 1950, Баку.

Հիմնարկին շինութիւն 50 աշտարակի ի մէջ հինգ հազար կանգնաչափ երկարութեան պարսպին»[9]։

Իսկ թե որքան հաջող է ընտրված Շուշի բերդաքաղաքի կառուցման վայրը, Հակոբ Շուշեցին գրում է. «Հիմնարկութիւնս այս միայն ի կես բերդին էր, իսկ մնացեալ կեսն, որպէս յիշեցաք, յԱստծոյ էր ամրացեալ»։

Ի դեպ, մեր պատմական գրականության մեջ նույնպես նշվել է Շուշիբերդի դիրքի անառիկությունը՝ ժամանակի ռազմական տեխնիկայի տեսակետից[10]։ Այնուհետև հեղինակը հանգամանորեն նկարագրում է Շուշի բերդաքաղաքի կառուցման ընթացքը։ «Ամառային էր ժամանակն յորժամ սկսան դնել պարիսպ ի վերայ հիման։ Ի կատար լերինն մարդիկք որք ի ծարաւ տօթոյ արեգական, և որք ի սաստիկ ցրտաշունչ հողմոյ գիշերային ժամոյն բացօթեայք ցրտահար լեալ անկան մեռեալք, ի մէջ տասն աւուրց անձինս յիսուն և երկերիւրոյ չափ անկան ի ջերմ և ի տենդ. իսկ որք առողջ համարեալքն էին նոքա ևս փախստեայ դարձան ի տունս իւրեանց։ Յայնչափ խղճութիւնս տեսեալ խանին ոչ խղճացաւ նոցա։ Այլ կրկին հրամայեաց զօրականացն իւրոց զի երթեալ ի գեօղս ուր դտանիցեն ածցեն զերիտասարդս ղծերս և պատանիս բռնի թէ և ի տանն միայն իցէ որ զնա ևս ածցեն անխնայ։ Եւ զինուորքն գնացեալ զօրս գտին բռնութեամբ գանիւ ածին ի լեառն. և մնացեալքն թագեան փախստեայ ի ծերպս և ի հովիտս լերանց։ Ի փապարս քարանց և ծառոց, յանտառս և յայգեստանիս. թողեալ զտունս և զընտանիս իւրեանց, զկալս և զվաստակս յարձակավայրի ի կերակուր գազանաց և թռչնոց։

Իսկ որոց բռնի տարան՝ նախքան շինութիւն պարսպին ետուն շինել հովանաւոր հարկ մի վասն ժողովրդեանն, զի մի ի բացի ննջեսցեն գիշերային և ի սաստիկ տօթոյին կես աւուր ժամոյն՝ ընդ հովանեաւ նորա հանգչիցեն քանի մի ժամ յետ այնորիկ կեսք հիվանդաց պակասեցան»[11]։

Բերդաքաղաքի կառուցումն ավարտելուց հետո Փանահ խանը բնակիչներ է հրավիրում նախ շրջակա գյուղերից և ապա այլ վայրերից։ Ղարաբաղի խանության պատմագիր Միրզա Ջեմալ Ջիվանշիրը գրում է, որ Փանահ խանը հիմնելով Շուշիբերդը «այստեղ է տեղափոխել Շահբուլաղում բնակվող բոլոր ռահաթներին, նախ ազնվական մարդկանց ընտանիքներին, մելիքներին, ծառայողներին և քեթխուդաներին (գյուղական տանուտերերին) և նրանց տեղ հատկացրել բերդի մեջ բնակվելու համար»[12]։

Հակոբ Շուշեցին պատմում է, որ Շուշվա բերդի կառուցումից հետո Փանահ խանը նոր բնակիչներ հրավիրելով Շուշի՝ արտոնություններ է խոստանում նրանց. «Որք ի բնակութիվն եկեսցեն ընտանեօք ի քաղաքս նորաշեն՝ ազատ են յամենայն հարկաց և ծառայութենից»։

Եթե Լեոն վերապահությամբ է խոսում Շուշի քաղաքի առաջին բնակիչների էթնիկական կազմի մասին, ապա Հակոբ Շուշեցին որոշակիորեն հիշատակում է, որ ժողովրդական հսկայական զանգվածներ են գաղթել Ղազանչիից, Ագուլիսից, Մեղրիից։ Նրանցից շատերը, գրում է հեղինակը, ուրախու-

9 Մատենադարան, ձեռ. 2734, էջ 3։

10 Լ ե ո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, 1915, էջ 62։

11 Մատենադարան, ձեռ. 2734, էջ 3։

12 Ռ. Հ. Տ ե ր-Գ ա լ ս տ յ ա ն, Շուշիի բնակչությունը 18-րդ դարից մինչև մեր օրերը, ԳԱ «Տեղեկագիր», 1963, № 9, էջ 68։

թյամբ են թողել իրենց շարժական ու անշարժ գույքը և հեռացել իրենց բնակավայրերից...

Անդրադառնալով այդ ժամանակաշրջանի պատմական իրադարձություններին, Լեոն հիշում է թե «Այն ժամանակ, երբ Փանահ խանը անառիկ բերդ էր դարձնում ժայռե հսկայական պարիսպներով շրջապատված Շուշին, Արաքսի հովտի այն մասերում, ուր գտնվում են Նախիջևանը, Գողթանը տեղի ունեցան մի քանի նշանավոր դեպքեր։ Ղազանչի գյուղը կոչվում էր Շահկերտ։ Բնակիչները պղնձագործներ էին, այդ արհեստից էլ գյուղն ստացել է իր անունը (Ղազանչի՝ կաթսա շինող)։ 1750 թվին մենք տեսնում ենք այդ գյուղը ապրստամբական դրության մեջ. ամրացել է գյուղի մոտ գտնվող սարի վրա, դիմադրում է Նախիջևանի պարսից խանին, Հեյդար անունով, վրդովված նրա արարքներից»[13]։

Ինչ վերաբերում է Ագուլիսից գաղթածներին, Չամչյանը իր «Պատմութիւն հայոց» աշխատության Գ հատորում գրում է, որ 1780 թ. պարսից Ագատ խանի հրոսակախմբերը բարբարոսաբար հարձակվում են իր ժամանակի նշանավոր այս քաղաքի վրա, որը հին Ջուղայից հետո, համարվում էր ամենանշանավոր առևտրական կենտրոնը, ավերում քաղաքը, գերեվարում ժողովրդին և վաճառքի հանում արևելյան շուկաներում։

Այս փաստերից հետո հասկանալի է դառնում, թե ինչու ագուլեցիք և ղազանչեցիք ուրախությամբ էին թողնում իրենց բնակավայրերը և հեռանում էին Շուշի, ապահովություն գտնելու ակնկալությամբ։

Քանի որ Շուշին կառուցվել էր Վարանդայում, Փանահ խանի բարեկամ ու դաշնակից Մելիք Շահնազարի տիրույթի սահմաններում, ապա հասկանալի է, որ բացի եկվոր տարրերից, Շուշիի բնակիչների զգալի մասը հայեր էին։ Իսկ թե 18-րդ դարի 50-ական թվականներին որքան հայեր էին բնակվում Ղարաբաղում, Հակոբ Շուշեցին հաղորդում է հետևյալ տեղեկությունը. «Հայազգի բնակիչք վիճակին Ղարաբաղու եօթանասուն հազար հոգի թուին ընդ ձեռամբ վիճակաւոր առաջնորդին Բաղդասարայ արքեպիսկոպոսին ի ցեղէն մեծ իշխանապետին Աղուանից Հասան Ջալալեանց»[14]։

Հետաքրքրական է նաև այն, որ Մեսրոբ Թաղիադյանը նույնպես «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ Շուշիի ազգաբնակչության էթնիկական կազմի մասին գրում է. «Բնակիչք նորա Հայք և Թուրք։ Հայքն հաշուէին լինել 500 տունք և ունէին եկեղեցիս երիս, զԱգուլեցւոց՝ զՂարաբաղցւոց՝ և զՂազանչւոց այլ քարակերտ և զմեծ եկեղեցիս ի նորոյ շինէին յայնժամ երկոքին եղբայրքն Թառումեանք՝ Զոհրաբ և Մարկոս»[15]։

* * *

Պատմական իրողություն է, որ Ղարաբաղի Փանահ խանը Շուշի բերդաքաղաքի կառուցումից հետո մտահոգվում է սպառազինել իր ժողովրդին և սկսում է ռազմական պատրաստություններ տեսնել հարավային Ադրբեջանի խանների կողմից սպառնացող վտանգից պաշտպանվելու համար։ Հակոբ Շուշեցին նկարագրում է նրա նախապատրաստական աշխատանքները, սակայն

13 Լ ե ո, նշված աշխատությունը, էջ 63։
14 Մատենադարան, ձեռ. 2734, էջ 3—4։
15 Մ ե ս ր ո բ Թ ա ղ ի ա դ ե ա ն, Ճանապարհորդութիւն ի Հայս, 1848, էջ 226։

չի խոսում հարավային Ադրբեջանի Մուհամմատ Հասան խանի և Ուրմիայի Ֆաթալի խան Աֆշարի նկատմամբ նրա տարած հաղթանակների մասին։

Հակոբ Շուշեցին վրիպում է և այն հարցում, երբ գրում է, թե Փանահ խանը «վճարեաց զկեանս իւր անաւարտ թողեալ զկամս իւր, բայց ի տեղւոջ հօրն զորդին նստուցին վերոյ յիշեալ բեկքն զԻբրահիմ խանն գաւառապետ Ղարաբաղու»[16]։ Մինչդեռ, հայտնի է, որ Փանահ խանը դեռ կենդանի էր և գտնվում էր Քերիմ խանի պալատում, երբ նրա որդին՝ Իբրահիմ խալիլը նշանակվեց Ղարաբաղի կառավարիչ։

Հայտնի է, որ 18-րդ դարի 90-ական թվականներին Պարսկաստանում հաղթում ու հզորանում է Աղա-Մուհամմատ խան Ղաջարը և դառնում Պարսկաստանի մեծ մասի տիրակալը։ Նա մտածում էր բարձրանալ պարսից գահը, ապա իր իշխանությունը տարածել Պարսկաստանի երբեմնի տիրույթների վրա։ Սակայն համաձայն Պարսկաստանում գոյություն ունեցող սովորույթի, սովորույթ, որն օրենքի ուժ էր ստացել, պարսից շահերի թագադրման ժամանակ երկրի չորս վալիներից զոնե մեկի ներկայությունը համարվում էր պարտադիր և տեղի էր ունենում անպայման Արդավիլ քաղաքում՝ հարավային Ադրբեջանում։ Այս կապակցությամբ Դուբրովինը գրում է. «Հասկանալի է, թե ինչու Աղա-Մուհամմատ խանը, ձգտելով պարսից գահին, ամենից առաջ պետք է նվաճեր Ադրբեջանը և իր իշխանությանը ենթարկեր վրաց թագավորին։ Նա գիտեր, որ եթե Արդավիլում չթագադրվեր, այլ մի ուրիշ քաղաքում, և եթե այդ արարողություններին ներկա չլիներ Վրաստանի վալին, ապա ժողովուրդը նրան շահ չէր ճանաչի։ Այդ պատճառով Աղա-Մուհամմատ խանը Թեհրան վերադառնալուց անմիջապես հետո, օգտվելով նաև Գանձակի Ջավաթ խանի խոստումից՝ իրեն համագործակցելու մասին վրաց Հերակլ-2-րդի դեմ, իր մերձավորներից մեկին՝ Սուլեյման խանին, 20,000 զորքով՝ ուղարկում է Թավրիզ։ Նա հրամայում է հավաքել շրջակայքի բոլոր խաներին (Խոյի, Արդավիլի, Նախիչևանի, Երևանի, Գանձակի և այլոց), և հարկադրել նրանց՝ ընդունելու իր գերագույն իշխանությունը։ Միաժամանակ պահանջում է համոզել Ղարաբաղի Իբրահիմ խանին հետևելու նրանց օրինակին, հակառակ դեպքում կարգադրում է՝ ավերել նրա ողջ ունեցվածքը և գրավել Շուշին։ Իբրահիմ խանին Իրանի տիրակալին ենթարկելու պարագային, Սուլեյման խանը պետք է միանար վերոհիշյալ խաներին՝ վրաց Հերակլ 2-րդի դեմ դուրս գալու համար[17]։

Աղա-Մուհամմատ խանի Սուլեյման Սարդարին տրված հրամանի ժամանակը Բուտկովի մոտ որոշակիորեն նշված է 1793 թ. ամառը[18]։ Այս փաստը Հակոբ Շուշեցին ոչ միայն հավաստում է, այլև ներկայացնում է շատ ավելի հանգամանորեն։

Սակայն Սուլեյման խանի առաքելությունը Ադրբեջան հաջողությամբ չպսակվեց։ Գանձակի խանից բացի տեղի խաները չարձագանքեցին նրա կոչին։

Իբրահիմ խանը, տեսնելով իրեն սպասող լուրջ վտանգը, օգնություն է հայցում վրաց Հերակլ արքայից ու Ռուսաստանից։ Թալիշի Մուստաֆա խանը դիմում է Ռուսաստանի օգնությանը, որի տիրույթներից ոչ հեռու կանգնած

16 Մատենադարան, ձեռ. 2437, էջ 4։

17 Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. III, СПб, 1886, стр. 8.

18 П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, часть II, СПб, 1869, стр. 326—327.

էին ռուսական զինվորական զորամասերն ու ռազմական նավերը։ Սրանց խնդիրն էր՝ պաշտպանել Գիլանում և Մազանդարանում գտնվող ռուս վաճառականների շահերն ու մերձկասպյան գոտիները՝ Աղա-Մուհամմատ խանի զորամասերի հնարավոր հարձակումներից[19]։

Այս նույն ժամանակամիջոցում Աղա-Մուհամմատ խանը պատրաստվում էր իրագործելու իր ծրագրերը վրաց երկրի ու Ղարաբաղի նկատմամբ։ Եվ որովհետև նա դեռևս չէր կտրել Ղարաբաղի խանին հպատակեցնելու հույսը, կրկին պատվիրատար է ուղարկում Իբրահիմ խանի մոտ և պահանջում նրանից պատանդ ուղարկել իր որդուն։ Աղա-Մուհամմատ խանի այս պահանջը կտրականապես մերժվում է Իբրահիմ խանի կողմից։ Այնուհետև Իբրահիմ խանը ռազմական դաշինք է կնքում Հերակլ թագավորի հետ և այդ նպատակով նրան է ուղարկում մի զգալի դումար։ Այդ ժամանակ Աղա-Մուհամմատ խանը Ղարաբաղի և Երևանի կողմերն է ուղարկում 4000-անոց մի բանակ։ Այս զորամասերն անցնելով Արաքսի հարթավայրը, դուրս են գալիս Փոքր Կովկասի լեռները, սակայն այստեղ հովտում նրանց ջախջախում են Իբրահիմի խանի և վրաց արքայազն Ալեքսանդրի զորքերը։ Մոտավորապես նույն ժամանակներում Աղա-Մուհամմատ խանի Գիլանից ուղարկած զորքերը ավերում են Թալիշի տիրույթները, թալանում գյուղերը, արմատախիլ անում մետաքսագործության նպատակով տնկված թթենիները։ Աղա-Մուհամմատ խանը միաժամանակ Էնզելիից և Մազանդարանից ծովով Թալիշ է ուղարկում զորքերով լի Կուրժումի կոչվող 60 պարսկական նավեր, սակայն ռուսական հետախուզական նավերը կտրում են նրանց ճանապարհը և հարկադրում վերադառնալ։ «Այսպիսիք էին Աղա-Մուհամմատ խանի առաջին քայլերը, որոնք նա նախաձեռնում էր հավանաբար հետախուզության նպատակով, միաժամանակ հուսալով, թե դրանք պատահաբար կարող է և նշանակալից հաջողության հասցնեն»[20]։

Պարսից զորավար Սուլեյման Շահզադայի 1793—1795 թթ. Ղարաբաղի Իբրահիմ խանի հետ վարած բանակցությունների ու նրա կատարած հետախուզական արշավների մասին պատմագրությանը հայտնի փաստերին Հակոբ Շուշեցին ավելացնում է շատ նորություններ ու մանրամասնություններ, որոնց չենք հանդիպում մասնավորապես հայկական սկզբնաղբյուրներում։

Ինչպես ասվեց վերը, Սուլեյման Շահզադան 1793 թվականի ամռանը հրաման է ստանում Աղա-Մուհամմատ խանից՝ ամեն կերպ հարկադրելու Ղարաբաղի Իբրահիմ խանին՝ ընդունելու պարսից հպատակությունը։ Հակոբ Շուշեցու տեղեկության համաձայն, Սուլեյման Շահզադան նախքան Ղարաբաղի վրա արշավելը հորդորական նամակ է գրում Իբրահիմ խանին, համոզում ու սպառնում վերջինիս, որ իբր ոչինչ չարժե պարսից շահի համար մեծաքանակ զորք մտցնել Ղարաբաղ, սմբակակոխ անել այդ երկիրը, միաժամանակ առաջարկում է նրան՝ իր միջնորդությամբ հաշտվել շահի հետ, այն է՝ հպատակվել նրան։

Ըստ Հակոբ Շուշեցու, Ղարաբաղի Իբրահիմ խանը Սուլեյման Շահզադայի այս հորդորական պահանջագրին պատասխանում է ամենախստագույն արտահայտություններով, չթաքցնելով իր անվստահությունը նրա գրածների նկատմամբ. հիշեցնում է իր հորեղբորը խաբելու, Արդավիլի բանտում ար-

[19] В. Н. Левиатов, там же, стр. 165.

[20] Նույն տեղում, էջ 167։

գելակելու, վերջում էլ նրա աչքերը բրելու իրողության մասին։ Այն մասին, թե որպիսի միասնականությամբ էին հանդես գալիս Ղարաբաղի խանության ժողովրդական լայն զանգվածները՝ բոլոր դասակարգերն ու դասերը ընդդեմ օտար նվաճողի, հեղինակը գրում է. «Յաղթեսցուք և յարկս մի տացուք շահին պարսից». ժողովուրդը պահանջում էր Իբրահիմ խանից. «զօրքն և բնակիչք գաւառին առհասարակ կամակիցք եղեն Իբրահիմ խանին՝ վասն վշտալի չարակիր ծառայութեան զոր կրէին հանապազ կամ ծառայել և կամ կեանս վճարել»[21]։

Ղարաբաղի Իբրահիմ խանի հետ վարած անհաջող բանակցությունները սաստիկ զայրացնում են պարսից շահին։ Նրա հրամանով Սուլեյման Շահզադան «սկսաւ ժողովել յատրպատական աշխարհէն հեծելազօրս և հետևակս բազումս՝ զի առեալ ընդ արքունիս եկեսցէ ի վերայ գաւառին Ղարաբաղու ժամանակն էր հնձոյ»[22]

Ղարաբաղի ժողովուրդը՝ հայ և ադրբեջանցի, լսելով պարսից զորքերի մուտքն իրենց երկրի սահմանները, թողնում է հունձը դաշտում, ցորենը կալերում, տուն, տեղ, ունեցվածք, վերցնում է միայն անհրաժեշտ որոշ պիտույքներ և եղներ ու ցրվում է երկրի տարբեր վայրերը։ Մի մասը նրանցից անցնում է Խաչենի ջրաբերդը, մի մասը՝ Ասկարանի ամրոցը, նրանք որոնք անասուն չունեին, փախչում էին Շուշի, իսկ նրանք, որոնց բնակարանները հեռու էին գտնվում ամրոցներից, թաքնվում են լեռներում ու անտառներում։ Շուշի բերդում գտնվող «քաջամարտիկները» (ինչպես անվանում է նրանց հեղինակը), նրանց երեխաներն ու կանայք զինվում են պաշտպանելու համար իրենց երկիրը, տունը, ունեցվածքն ու պատիվը։ Նրանք գիշերներն անգամ վայր չէին դնում իրենց զենքերը, ավելին՝ «Սոքա գնացին առ Իբրահիմ խանին և ասեն. մի երկնչիր. մեք միայն պահպանեսցուք բերդաքաղաքս, միայն թէ տուր մեզ որքան կարևոր լիցի վառօդս»[23]։

Իբրահիմ խանը ոգևորված հարկավորը տրամադրում է բերդի պաշտպաններին, որոնք ձեռնամուխ են լինում իրենց պաշտպանական դիրքերի ամրապնդման գործին։ Նրանք այնպես ճարտարությամբ են ամրանում քարայրներում, որ ինչպես հավաստում է հեղինակը, «միով արամբ ընդդիմանային հարիւրաւորաց և այն ոչ զինու, այլ քարամբք»։ Այս ամրությունները նկատի ունի Հակոբ Շուշեցին, երբ գրում է, թե Իբրահիմ խանը մտածում էր իր հարստությունը՝ գանձերը, ոսկեղեն ու արծաթեղեն անոթները մինչև պատերազմի վերջը թաքցնել այդ քարայրում, իբրև ամենաապահով վայրում։

Եվ այսպես, առաջնորդելով հսկայական քանակով զորամասերի (ըստ Բուտկովի տվյալների 6000), պարսից զորավար Սուլեյման Շահզադան արշավում է Ղարաբաղի վրա, կանգ առնում Շուշիբերդից «միով թնդանօթաձիգ նպատակաւ հեռի» և պատվիրատար է ուղարկում հայտնելու Իբրահիմ խանին, որ նա անձնատուր լինի։

Իբրահիմ խանը ոչ միայն կտրականապես մերժում է Սուլեյման Շահզադայի վերոհիշյալ պահանջը, այլև վիրավորական խոսքեր է ասում նրա զորքերի հասցեին. «Չերկնչիմ ի բազմութենէ կանանցդ քոց». Իբրահիմ խանի

---

21 Նույն տեղում։
22 Նույն տեղում։
23 Նույն տեղում, էջ 6։

հասցրած այս վիրավորանքն ավելի է զայրացնում Սուլեյման Շահզադային և նրա զորքերը երեք օր ու գիշեր անընդմեջ ռմբակոծում են Շուշիբերդ ամրոցը։ Տեղի ունեցած կատաղի ճակատամարտը հետևյալ կերպ է նկարագրում Հակոբ Շուշեցին. «Սկսաւ ի գիշերոյ յայնմանէ մինչ երեք օր արձակել ռումբս ի վեր քաղաքին, ի ձայնից մեծամեծ թնդանօթացն հովիտք աղաղակէին, և կանայք յղիք արտաթափ լեալ զերեխայս կորուսանէին յորովայնի, գնդակքն թնդանօթաց, որք նման հնացեալ լուսնոյ՝ կարմրացեալք ցոլային. յօդս ճախարակելով թոթափէին ի վերա քաղաքին, բայց թուլացեալք ի զօրութենէ հեռի լինելոյն նպատակին։ Վասն այն ոչ առնէին ներգործութիւն քակտման պարսպաց. այլ ընդ հարեալ պարսպացն անկանէին յերկիր։ Այսպէս երեք աւուր անդադար թնդանօթաձիգ եղեն՝ բայց քաղաքին վնաս ոչինչ եղև»[24]։

Շուշիբերդի ամրոցի տակ կրած խայտառակ պարտությունից հետո Սուլեյման Շահզադան դիմում է խորամանկության։ Նա գիշերով իր ամբողջ բանակով գաղտագողի թողնում է, հեռանում քաղաքից և տեղավորվում ոչ հեռու գտնվող Դովթալապ կոչվող ձորում։

Շուշիի բնակիչներին երկար ժամանակ անհայտ է մնում թշնամու զորքերի տակտիկական այս հնարանքը, սակայն Իբրահիմ խանը չի կորցնում զգաստությունը. նա հրամայում է չբացել բերդի դռները։

Շուշիբերդականներից ոմանք դժգոհում են խանի այս հրամանից, պատճառաբանելով, որ 20 օրից ավելի է արդեն գտնվում են բերդում, փակված վիճակում, անասուններին կեր է հարկավոր, իսկ իրենց՝ աղուն։ Խանը հարկադրված հրամայում է բանալ բերդի դռները։ Բերդից դուրս եկած ժողովրդի վրա անմիջապես հարձակվում են թշնամու թաքնված զորքերը։ «Սրընթաց արձակեցան ի վերայ նոցա երկսայրի սրով և խողողեցին զբազումս ի նոցանէ ի մեծ ձորն Ղայպալու կոչելոյ, ի սպանելոցն բազումք հայ էին, որոց զգլուխս հատեալ տանէին Շահզադային յընծայ»[25]։

Ղարաբաղի Իբրահիմ խանը տեսնելով պարսից զորքերի պատճառած վնասները, օգնություն է խնդրում Ասկարանի ամրոցի վերակացու Հասան բեկից. «Հասիր, զի ահա գլորիմ և առցեն պարսիկք զքաղաքս մեր՝ և զիս ընդ քեզ չարաչար սատակեսցեն»[26]։

Ասկարանի կառավարիչ Հասան բեկն Իբրահիմի պատգամավորին պատվիրում է՝ գնացեք ասացեք իմ տիրոջը՝ Իբրահիմ խանին ինչո՞ւ է այդքան երկնչում, երբ մեր այս երկու ամրոցները (Շուշին և Ասկարանը—Ռ. Տ.) լի են քաջերով։ Եվ նույն ժամին նա մարդ է ուղարկում լրտեսելու թշնամուն։ Երկար ու վիպական ձևով է նկարագրում Հակոբ Շուշեցին Հասան բեկի լրտեսի գործունեությունը թշնամու բանակում։ Վերջինիս նպաստավոր տեղեկությունների արդյունքը լինում է այն, որ Հասան բեկը զգուշացնում է Իբրահիմ խանին ու պայմանավորվում նրա հետ թշնամու վրա հանկարծակի հարձակում գործելու մասին։

Համաձայն այս պայմանավորվածության Ասկարանի և Ղարաբաղի ժողովուրդը գիշերով երկուստեք հարձակում են գործում թշնամու քնած զորքերի վրա և ծանր կորուստներ պատճառում նրանց։ Եվ քանի որ այս մասին հայկական աղբյուրներում ոչինչ չի հիշատակվում, ուստի անհրաժեշտ ենք

24 Նույն տեղում, էջ 7։
25 Նույն տեղում, էջ 8։
26 Նույն տեղում, էջ 11։

համարում Հակոբ Շուշեցու տեղեկությունը նշված ճակատամարտի մասին բերել ամբողջությամբ։

«Իսկ պարսիկք բնաւ չիմացան զոր եղևն, քանզի կերեալ զկասկարայս ի մսոյ պարարտ եզանցն և հորթուցն և արբեալ ի զովացուցիչ ջրոյ անտի ծանրացեալ էին աչք նոցա և մտեալ ի խորին քուն անզգուշութեամբ, մինչև Հասան Բէկն զօրօքն իւրովք դիմեցին ի վերայ նոցա և չարաչար սատակեցին երազումս ի նոցանէ։ Եւ նոքա ընդոստացեալ ի քնոյ աճապարեալ այսր և անդր ի խաւար գիշերի ոմն զկնի սուսեր մինչև եկեալ զօրքն Հասան բեկին և քաջքն շուշեցիք խառնեցան ընդ զօրս նոցա շփոթեցին զնոսա և փութով ելին և փախեան։ Այնքան բազմամբոխ էին զօրքն պարսից զի սոքա երեք հազարք մտին ի մէջ նոցա և բազումս կոտորեցին և ելեալ խոյս ետուն ի նոցանէ։ Իսկ նոքա խելագարեալ առին զսուսերս և կոտորէին զմիմեանս ի մթին գիշերի թշնամի կարծելով զիրեարս։ Եւ այսպէս հարկանէին զմիմեանս մինչև ծագել լուսոյ առաւօտուն և տեսին զմիմեանս, զի չիք թշնամի ի միջէ այլ զիրեարս հարկանէին»[27]։

Բուտկովի տեղեկություններից հայտնի է, որ Սուլեյման Շահզադայի առաջնորդությամբ Ղարաբաղ է մտել 6000 պարսից զորք։ Հակոբ Շուշեցին գրում է, որ այս ճակատամարտում պարսիկները կորցրել են 4000 զինվոր. նույն հեղինակի վկայությամբ ճակատամարտ էին մտել 3000 ղարաբաղցիներ։ «...Սուլեյման Շահզադեն իբրև ետես թէ պարտեցաւ խաբեութենէ թշնամեաց և ի զօրացն իւրոց անկան զոր հազար արք յոյժ զարհուրեցաւ, և խորհէր ի մտի առնուլ զմնացեալ զօրս և փախչիլ»[28]։

Այս ճակատամարտում կրած պարտությունը հարկադրեց Սուլեյման Շահզադային մտածելու, թե ինչ է սպասում իրեն, ուստի նա խորհրդակցում է Թեհրանից իր բանակը ժամանած Հասան Ղուլի հազարապետի հետ, և հայտնում հետևյալ մտավախությունը. «Զի՞նչ արասցուք, երկնչիմ մի գուցէ ամենայն զօրութեամբ դիմեսցեն առ հասարակ ի վերայ մեր և սրոյ ճարակ տայցեն զմեզ։ Վասն զի սոքա ամենեքեան քրիստոնեայք, և թուրք, այր և կին, մեծ և փոքր միաբանեալ են յապստամբել ընդդէմ թագաւորին մերոյ և մեք ըստ չափու զօրաց սոցա չունիմք աստ զօրս, արդ ասա ինձ փութով ի գիշերս գաղտ փախեցուք զօրքս ուստի ի Դաւրէժ և ազդ արասցուք շահին՝ թող ինքն հոգասցէ»[29]։

Այնուհետև Հակոբ Շուշեցին տեղեկացնում է, թե ինչպես Հասան Ղուլիի և Սուլեյման Շահզադայի որոշմամբ, պարսից զորքերը երկու օրվա ընթացքում թողնում են Ղարաբաղի սահմաններն ու մտնում Արդավիլ։

Հակոբ Շուշեցին գրում է, որ Սուլեյման Շահզադան 1793 թ. Ղարաբաղ կատարած արշավանքից երկու տարի անց՝ 1795 թ. կրկին հրաման է ստանում Աղա-Մուհամմատ խանից արշավելու Ղարաբաղի խանության վրա, հնազանդեցնելու Իբրահիմ խանին, հակառակ դեպքում «ասպատակեսցէ իսպառ զամենայն գաւառս»։

Սկսած Արաքս գետից մինչև Շուշի տանող ճանապարհը Սուլեյման Շահզադայի պահանջով պարսից զորքերն ավերում, հրկիզում են բնակավայրերը.

---

27 Նույն տեղում, էջ 12։
28 Նույն տեղում։ (Տե՛ս նաև «Արարատ», 1877, էջ 145)։
29 Նույն տեղում։

սրախողող անում մարդկանց և բռնագրավում այն ամենը, ինչ հանդիպում էր իրենց։ Այսպես, ասպատակելով, նրանք «եկեալ հասին ի Վարանդա փոքր գաւառ կոչեցեալն, որ մասն Ղարաբաղուա։

Ղարաբաղի հայ և ադրբեջանցի ժողովուրդը, նրա հմուտ ու դիվանագետ Իբրահիմ խանը հավաքվել էին Շուշի ամրոցում և պատրաստ հակահարված տալու սպասում էին թշնամուն։

Սուլեյման Շահզադայի զորքերը 1795 թ. մտնելով Ղարաբաղ, մոտենում են Շուշի բերդաքաղաքին, վրաններ գցում, զորքը բաժանում չորս մասի։ Մի մասը Հուսեին Ղուլի հազարապետի գլխավորությամբ ուղարկում են բերդի արևելյան կողմը, ուր գտնվում էր Զարոլի գյուղը. երկրորդ մասը տալիս են մի ոմն հազարապետի, ուղարկում քաղաքի հարավային կողմը, դեպի Քարատակ կոչվող գյուղը, երրորդը, Թահմազ Ղուլի հազարապետի առաջնորդությամբ, ուղարկում են ճեղքեալ կոչվող լեռան դիմաց գտնվող շուշեցիների քարայրը։ Պարսիկներին անհայտ էր շուշեցիների այնտեղ գտնվելը, և Թահմազ Ղուլի հազարապետն իր զորամասը շարժում է դեպի նշված լեռը։

Պարսիկներին հաջողվում է պաշարել Շուշին։ Հետաքրքիր են Հակոբ Շուշեցու տողերը բերդում պաշարված ժողովրդի հերոսական ոգու և հատկապես կանանց սխրագործությունների մասին, որոնք հարկ ենք համարում ամբողջությամբ մեջ բերել։ «Զայս բան լուեալ Շուշեցւոց մախային ի սիրտս իւրեանց և սպասէին՝ թէ որպէս սրոյ ճարակ տայցեն զնոսայ... Եւ յետ երկուց աւուրց գիշերայն ամենայն զօրքն պարսից յամենայն կողմանց եկեալ պաշարեցին զքաղաքն։ Եւ ի ծագել առաւոտուն ազդ եղև քաղաքին թէ պաշարեցին պարսիկք զքաղաքս իւրեանց։ Ամենեքեան առհասարակ մերժեալ զերկիւղն ի բաց, սրտմտութեամբ և ամենայն զորութեամբ վառեցան որպէս հրով։ Արք թողեալ զկանայս և զտունս՝ իւրեանց հանդերձ հրացանիւք և սուսերօք ընթանային դէպ ի յարևելեան կողմն քաղաքին, ուր մարդաշէն և տկար պարիսպն էր։ Իսկ կանայք զհանդուրժեալ թողին զստնդեայս և զմանկտիս ի տունս՝ արշաւանօք ընթացան ի գլուխ Աստուածաշէն լեռնապատ պարսպին. և փրծուցանէին ի լեռնէ անտի զքարինս մեծամեծս և գլէին ի վերայ զօրաց նոցա. այնպէս, զի ի գլելն միոյ քարի զքանս կամ զերեսունս ի պարսպից միանգամ անշնչացուցանէր»[30]։

Շուշիի պաշտպանության հերոսամարտերում իրենց արիաբար դրսևորած հերոսուհիներն անբավարար համարելով իրենց արածը, մտածում են նորանոր ձևերով հարվածել թշնամուն և գտնում են ելքը։

«Եւ ի մօտ տեղի ինչ կայր գերանս կուտակեալս՝ արձակեալ ի վերայ և առիւծաբար ի վեր քան զտկար կանացի զօրութիւնս իւրեանց մղելով դարձուցանէին զծանր և զերկար հեծանսն՝ և հոլովէին զառ ի վար լերինն, և քառասունս կամ զյիսունս միանգամ շարաջաղջախ խորտակէին այնպէս, զի յետ միոյ ժամու ի բազմաթիւ զօրաց անտի սկսաւ կարացին փաղչել ի դաշտն, ուր ամենայն զօրքն էին անտ և Սուլեյման Շահզատան իւրեանց»[31]։

Շրջապատելով Շուշի քաղաքը պարսից զորքերը չեն կարողանում դրավել այն. նրանք կրկին հավաքվում են իրենց զորավար Սուլեյման Շահզադայի մոտ Դովթալապ կոչվող լեռան գագաթը։ Իբրահիմ խանը մտածում է չկորցնել հարմար առիթը և նախապատրաստվել հակառակորդին ուժգին հարված տալու համար։ Նա կարգադրում է իր զորքերին ոչ մի կրակ չարձակել մինչև որ թշնա-

30 Նույն տեղում, էջ 15։

մու զորքերն ամբողջությամբ հավաքվեն նշված վայրը։ «Եւ ի վեց ժամու աւուրն իրրև դումարեցաւ ամենայն զօրքն ի գլուխն Դովթալապու արձակեցան ամենայն պարսպաց թնդանօթն երեսուն հետզ՝հետե անդադար ժամի այնպէս ցրուեցան անհամար բազմութիւն ընդ հովիտն և ընդ փապարս լերանց, մինչև ոչ գտանիլ երկու զինուորակիցք ի միասին»[32]։

Ասկարանի ամրոցի զորապետ Հասան Ղուլի բեկը, լսելով պարսից զորքերի պարտության մասին՝ Շուշիի պարիսպների տակ, իր զորամասերով հետամուտ է լինում նրանց մինչև Արաքս գետը։ Ի դեպ նա նպատակ է ունեցել կենդանի բռնելու Սուլեյման Շահզադային, սակայն վերջինս թողնելով իր խուճապահար զորքերին, 20 ձիավորով զորապետներով փախչում է Թավրիզ։

1795 թ. ամռանը Շուշի ամրոցի պարիսպների տակ Սուլեյման Շահզադայի զորքերի պարտությունը խիստ զայրույթ է պատճառում Աղա-Մուհամմատ խանին. նա հրամայում է իր մոտ բերել դասալիք այն զորավարներին, որոնք արդեն Թավրիզ էին ժամանել՝ հանել նրանց աչքերը, կտրել ոտքերի մատերը ու տանել «ի յանցաւորաց քաղաքն Արդաւիլ»։

Սկսվում է մի նոր ու ահավոր զորաժողով. Աղա-Մուհամմատ խանը, իր մոտ հրավիրված նախարարների ներկայությամբ, հայտարարում է. «Կենդանի է անձն իմ ես ինքնին երթայց և մի մնասցէ ի գաւառին շունչ կենդանի և կամ ծառ պտղաբեր»։ Այնուհետև 1795 թ. օգոստոս ամսվա սկզբներին Աղա-Մուհամմատ խանը իր 80-հազարանոց բանակով շարժվում է դեպի հյուսիս, դեպի Անդրկովկաս, դեպի Ղարաբաղ։

Այստեղ կանգ առնելով Շուշիբերդի մոտակայքում, նա պատգամավոր է ուղարկում Իբրահիմ խանի մոտ և հանձնարարում ասել «Ես ոչ մարտեաց ընդ քաղաքացիդ մինչև ի սովու զմիմիանս կերիջիք և յայն ժամ ինքնակամ կամոք աղաչեսջիք անձնատուր լինել ինձ»[33]։

Պատմագիրը իրավամբ գալիս է այն եզրակացության, որ Աղա-Մուհամմատ խանի այս ինքնավստահությունը անհիմն չէր, քանի որ նրա կողմից ուղարկված զորքերը 3 տարի անընդմեջ հարձակվում էին Ղարաբաղի խանության վրա, հնձի ժամանակ և «ոչ տային թոյլ ժողովել զվաստակս իւրեանց»։ Պատմությունն այնուհետև լռում է պարսից զորքի հետագա առաջխաղացման և մեկամսյա հարձակումների մասին. զարմանալի կերպով լռում է և Թիֆլիսի կործանման աղետալի փաստի մասին։ Իրողությունն այն է սակայն, որ 1796 թ. ռուսների դեպի Անդրկովկաս շարժվելու լուրը և Շիրազում Աղա-Մուհամմատ խանի դեմ ծագած ապստամբության լուրը, հարկադրում են նրան թողնել Մուղանի դաշտը, վերադառնալ Պարսկաստան՝ ծագած ապստամբությունը ճնշելու համար։ Նշված կարևոր քաղաքական իրադարձությունները դժվար է ասել գիտակցաբար, թե անգիտակցաբար շրջանցելով, Հակոբ Շուշեցին անդրադառնում է արդեն պարսիկների 1797 թ. արշավանքին։

Երբ Աղա-Մուհամմատ շահը առանց մարտերի գրավում է Իբրահիմ խանի կողմից լքված Շուշին, դաժան հաշվեհարդար է տեսնում բերդի բնակչության հետ։

«Եւ ետ ածել զառաջեաւ զամենայն իշխանսն հայոց՝ և չարչարեալ զնոսա բազմատեսակ տանջանօք, զի ստոյգն ասասցեն զորքանութենէ յընչից

---

32 Նույն տեղում, էջ 16։

33 Նույն տեղում, էջ 17։

իւրեանց, զոմանս գլխիվայր կախէին՝ ոմանց ի պարանոց արկանէին հրացեալ կասկարայս և հրացեալ շամփորք խարէին զմարմինս նոցա և ոմանց՝ կարմրացեալ սկահակս անցուցանէին ի վերա սկաւառակի գլխոյն՝ ևս և այլով բազմատեսակ կոշկոճանօք վշտացուցանէին զամենայն բնակիչս քաղաքին։ Զնոյս շարշարանս ետուն կանանց ևս ասելով՝ գիտեմք, զի ունիք պահուստս ծրարեալս, անօթս արծաթեղէնս և կամ զայլ ծանրագին ագանելիս բերիջիք շահքն։ Եւ իբրև այսպէս յինէ որ տանջանօք անխնայ պարզեաց զամենեսեան քաղաքն յնչից՝ մինչև զեկեղեցիս ևս, վասն զի կանայք անճարացեալք թէ զինչ տացեն այլ՝ ինչ ոչ մնաց՝ զի տացեն ի զերծուցանել զարս իւրեանց ի վշտացն՝ մտանէին յեկեղեցիս և փթթուցանէին զարծաթս յաւետարանաց՝ տարեալ մատուցանէին շանց, զի ազատեսցին զնոսա»[34]։

1797 թ. Շուշիում տեղի ունեցած Աղա-Մուհամմատ խանի սպանության դրդապատճառների մասին պատմական գրականության մեջ, հիմնականում, գոյություն ունի այն կարծիքը, որ այն ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ նրա անօրինակ դաժանությունների արդասիքը։ Անդրադառնալով այս փաստին, Հակոբ Շուշեցին շեշտում է այն վարկածը, թե խանի սպասավորներից Սաֆար Ալին այլևս անկարող հանդուրժելու խանի դաժանությունները, համարձակվում է նրան ասել. «դարձիր և դադրեա յանգթութենդ. վրկացուցիր զանմեղ ժողովուրդսդ յընչից՝ միթե ի մորթոց իւրեանց հանել կամիս զդոսա»[35]։ Զայրացած ծառայի հանդգնությունից, անգութ բռնակալը ոտքի է ելնում, անձամբ կտրում նրա երկու ականջը, վերքերի վրա աղ ցանում և միաժամանակ սպառնում, թե հաջորդ օրը պետք է սպանի նրան։ Ծառան մտածելով հետևյալ օրվա կրելիք սարսափների մասին, որոշում է սպանել նրան և ազատել ժողովրդին այդ բռնակալի ճիրաններից։ Սաֆար Ալին գիշերով գաղտնի մտնում է Աղա-Մուհամմատ խանի ննջասենյակը, զգուշությամբ նրա բարձի տակից հանում է երկսայրի սուրը և խրում խորը քուն մտած բռնակալի սիրտը։ Շահը սարսափահար փորձում է վեր բարձրանալ, խոստումներ անել, սակայն շատ ժամանակ չի անցնում անշնչանում է։ Սաֆար Ալին դիակը ծածկում է օթոցով ու նույն զգուշությամբ հեռանում։ Լուսադեմին նա մտնում է Երից մանկանց հայոց եկեղեցին, հայտնում, որ սպանել է շահին և առաջարկում է այդ մասին շտապ հայտնել Իբրահիմ խանին։

Այնուհետև Շուշեցին նկարագրում է խանի զորքերի խուճապը. «Եվ ով կարէ պատմել թէ որպէս ի միում ժամու այնչափ անթիւ զօրաց նորա որպէս փախեան թողեալ զզէնս և զամենայն պատերազմական գործիս ևս և զդի շահին իւրեանց։ Որովհետև նեղ էր գուռն քաղաքին և անհնար էր ի միում ժամու ելանել այնչափ զօրաց՝ և բազումք ի նոցանէ լուեալ թէ Իբրահիմ խանն գայ զօրօքն արտաքս ընկեցին զինքեան ի պարսպէն և այսպէս փախան ամենեքեան յերկիրն իւրեանց»[36]։

* * *

Հակոբ Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու» ձեռագիր աշխատության մեջ եղած արժեքավոր տեղեկությունները ինչ-որ չափով լրացնում և

34 Նույն տեղում, էջ 18։
35 Նույն տեղում։
36 Նույն տեղում։

հավաստում են 18-րդ դարի երկրորդ կեսի Ղարաբաղի խանության սոցիալ-տնտեսական վիճակի և ժամանակի քաղաքական իրադարձությունների պատկերը։ Հեղինակն անդրադառնում է և ռուսական զորքերի շարժմանը դեպի Անդրկովկաս, հայազգի գեներալ Մադաթովի սխրագործություններին, Իբրահիմ խանի ռուսական օրիենտացիան վերջնականապես ընդունելու հետ կապված իրադարձություններին և այլն։ Սակայն, այս հարցերին մենք չենք անդրադառնում, քանի որ Հակոբ Շուշեցու «Պատմության» այդ հատվածը գրեթե նոր բան չի ավելացնում գոյություն ունեցող պատմական պաշտոնական գրականությանը։

Р. Т. ТИТАНЯН

НОВЫЕ МАТЕРИАЛЫ О ГЕРОИЧЕСКОЙ ЗАЩИТЕ КРЕПОСТИ ШУШИ В 1793—1795 гг.

Резюме

В статье говорится о рукописи под заглавием «История области Арцаха», хранящейся в Матенадаране им. Маштоца за № 2734. Автором рукописи является Акоп Саркаваг Погосян-Закарянц Шушеци, изложивший свою историю в Иерусалиме в 1853 году.

В «Истории» охвачены события второй половины XVIII века в историческом Арцахе (Карабах). Особый научный интерес представляют свидетельства автора об основании крепости Шуши, о нашествии Ага-Магомед-хана на Карабах и о героической борьбе армянского и азербайджанского народов.

Рассматриваемое сочинение самый пространный из всех уже известных армянских первоисточников по истории Карабаха этого периода. В нем имеются весьма ценные сведения и о продвижении русских в Закавказье.

«История» дополняет сведения уже известных первоисточников рядом новых подробностей. Так, интересны сведения о нашествии персидского принца Сулеймана на крепость Шуши в 1793 году, о совместной героической обороне крепости армянским и азербайджанским населением, о нападении объединенных сил Карабаха и Аскарана на персидскую армию, о доблести женщин осажденной крепости Шуши в 1795 году и т. п.

Эти и ряд других сведений в определенной мере дополняют историографию, относящуюся к социально-экономическому и политическому положению Карабаха в последней четверти XVIII века.